

—Մ'օղլայ էգի ինչ պատ աս ինչ գաւի
աս ինչ էրեցիր մէկնէ մեզի:

Ասաց. — Թագաւոր ասրած, մարգու
աշք աշխրքի մալից չկշտանայ իլահի քի
էրէց. մէկ ծանկ հոյ մարգու աշք կր կրշտա
ցու. իմալ օ իրիցու գլուխ դրու ինչ շտեսեր
էր խոյ օ թալլի կշտացաւ թեթիւրէցաւ. մկայ
Յանոն Կանոնայ մալից ընձի խակի պէտք չէ
աշխրքի մալը աշխարք կը մնայ:

—Մ'օղլայ աշխար կը դրլըպի օ օսկի կու
նենայ գու ինչ գրուցք ա կենես:

Ասաց. — Աշխրքի վրայ Յանոն Կանոնայ
մալից շատ գոր կայ էնի ինչ տարաւ. մալ
մացեր աս ընկեր լիտան պաի մնայ էլման
աշխար: Մալ մնայ ինքը գնաց:

Թագաւոր ասաց. — Հարամ էգի Յանոն
Կանոնայ մալից մեզի. գուռը էլման պաի փա
կուի մալ մնայ տեղ:

Մէկ էլ էլան Յանոն Կանոնայ մալի մի
ջից գուս փակեցին: Հալա էն փակուին աս
հարա էն փակուի բան մը շտարած ա միջէն:

Յանոն Կանոն կըրայր էն էլգած. Աս
տուածութեն էնգոնց մալ օսկի դարձուց
գրուի ա' էգոնց մալ պաի մնայ տեղ չուրի
աշխրհի վերջին Նոնաու կալի մէջ պրաի բա
ժուի:

Յանոն Կանոնայ մալ Ախլաթ, Ալթուն
թեփեսու տակն աս Ախլաթ եօթ թագաւոր
նտեր աս եօթ գիր էլա աւերեր աս էն մէկ
Մ'հերի աւերուին աս մկայ լէ Բաֆր — Կալասի
կասեն:



Ժ Ա Ն Տ Ա Խ Տ

Ժանտախա է յայանուել կրկին և ոչ
միայն հեռաւոր Հնգկաստանում, ուր երբէք
չէր վերջացել այն և այժմ նոր օտաւախ
թեամբ կոտորածներ է անում Բոմբէյի շըր
շակալքում, այլ նոյն իսկ Ներոպայի գլխա
ւոր կեդրոններից մէկում, Վիլնոյում ինչ

պէս և Սրմբրգանդի նահանգում: Վիլնոյ
յում, ինչպէս հաւատացնում են նա չի կա
րող կլնել Փրանց-Լուգէֆ հիւանդանոցի պա
տերից, ուր յայանուեցաւ և մնաց մինչև
այժմ՝ մի քանի զոհեր միայն տանելով: Առա
ջին զոհն եղաւ հիւանդանոցի սպասաւորնե
րից մէկը որ ինչպէս կրեւում է անգոյջ է
զանուել ժանտախաի ըսցիւնների հետազօտու
թեան համար կատարուած փորձերից յետոյ
բժշկական գործիքներ կամ ամաններ լուանա
լիս մանաւանդ որ վերջին ժամանակ յաճախ
արբած վիճակի մէջ է եղել: Երկրորդ զոհը
բժիշկ Միւլէր՝ վարակուել է այն պատճա
ռաւ, որ առջինի հիւանդութիւնը պար
զուելուց յետոյ այլ ևս թոյլ չի տուել ոչ ոքի
մօտենալու, փակուել է նորա հետ մի փոքր
սենեակի մէջ, ախտահանութեան և հիւան
դին ինամելու գործն ինքն է կատարել իմի
ջի այլոց ապահով քերել է պատերը քա
ցիւնները հեռացնելու համար, և երևի այդ
պիտով բացիներ է ներս շնչել:— Տեղական մտ
նագէտ բժիշկները հաստատում են որ բազ
մաթիւ նպաստաւոր պայմաններ են պէտք
ժանտախաով վարակուելու համար, ապա թէ
ոչ այնպէս հեշտութեամբ չի դիպում նա
ինչպէս սովորաբար կարծում են: Այժմ հար
կաւ գգուշութեան ամէն տեսակ միջոցներ են
ձեռք առնուած. վարակուածներին ինա
մոյ բժիշկն ու սպասուհիները հիւանդի մօտ
մտնելիս ծածկում են դէմքն ախտահանալ
բամբակից և շղարչից պատրաստած մի դիմա
կով որի վերայ միայն աշքերի համար բա
ցուածքներ կան և որ սցրուում է անմիջա
պէս հիւանդի մօտից ելնելուց յետոյ, այս
պիտով շնչողութեամբ վարակուելու առաջն
առնուում է, որ ամենագիւրին ծանապարհն է:

Սրմբրգանդի նահանգում ևս ժանտախ
աւն առանձնացած է առ այժմ Անդով անու
նով տեղում, որ լեռնային դժուարամտաշի
գիրք ունի և հարեան բնակավայրերից բա
ժանուած է խոր ձորերով: Տեղական կառա
վարութեան ձեռք առած միջոցները բաւա
կան չհամարելով որ դէպի Անդով տանող բո
լոր ծանապարհները փակել է, հիւանդներին
տեղաւորել առանձին բնակարանում, ախտա
հանութեան և բժշկութեան գործը կարգա

արել մեռածներն զգեստներն այրել զի զը
 արել էլն. Բարձրագոյն Հրամանա Նորին
 Բարձրութիւն Նշխան Ա. Օլջենբուրգսկից ու-
 դեորուել է Սըմբրդանդ՝ նոր ամենահռան-
 դուն միջոցներով շրջակայքը վարակու մից ա-
 դատելու և վարակուած տեղերում հիւան-
 դութեան առաջն տանելու համար:



ՄԱՏԵՆԱՆՍՈՍՈՒԹԻՒՆՆ.

ՅԵՍՈՒՍ ԲԵՒՍՏՈՒՆ ԵՐԿՐԱՆՈՐ ԿԵԱՆՔԸ ԵՒ
 ՎԱՐԳՎԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ, հիւսուած չորս աւետարան-
 ներից ժամանակագրական
 կարգով.—աշխատ. Տաճար
 քահ. Մարտեան. Բագու,
 1898.

Թէև այս գրքի հեղինակը յառաջա-
 րանում ասում է, որ շաւելի ձեռնհաս և
 գիտակ անձանց է թողնում ս. աւետարանի
 կամ Ս. Կտակարանի աշխարհաբար թարգ-
 մանութիւնն այնպէս ինչպէս որ կայ, բայց
 նա ինքը յանձն է տուել թարգմանել ս. աւե-
 տարանը միայն թէ չորս աւետարանների
 հատուածներն յաջորդաբար այնպէս շարելով
 որ մի ամբողջական աւետարանական պատ-
 մութիւն յառաջ գայ: Գործը միևնոյն է՝ ար-
 դեօք առանձին աւետարաններ էք թարգմա-
 նում թէ նորա զուգրնթաց հատուածները
 երկու դէպքում ևս ձեռնհաս պէտք է լինել
 կամ արտաքոյ կարգի համարձակութիւն
 ունենալ՝ այսպիսի մի ծանր և խիստ պա-
 տասխանատու գործի ձեռնարկելու համար:
 Իսկ թէ որչափ ձեռնհաս էր Արժ. Հեղի-
 նակը որչափ զազափար ունի աւետարա-
 նի և նորա թարգմանութիւնների մասին՝
 այդ ցոյց տալու համար բաւական է յառա-
 ջարանի հեռակեալ նախագասութիւնը. «Բո-
 խազրութիւնը կատարուած է Եօթմանանից
 կոչուած թարգմանութիւնից» (!): Աւետարան
 և Եօթմանանից թարգմանութիւն ... Եւ մի
 մտքով որ Բրիտանոսից երկու գար առաջ կա-
 տարուած Հին Կտակարանի յունարէն թարգ-
 մանութիւնն ու ս. Սահակի և ս. Մեսրոպի
 մեկ տուած Հին ու Նոր Կտակարանի հայե-

րէն թարգմանութիւնը միմեանց հետ շփոթել
 կարող էր՝ համարձակուում է աւետարան
 թարգմանել, գիտնական ծանօթութիւննե-
 րով զարգարել և իւր այդ խեղճ գոր-
 ծը ներկայացնել «եղբայրներին և քոյրերին»
 իբրև Բրիտանոսի աւետարան՝ որ կեանքի ու-
 ղեցոյց պէտք է լինի որ պէտք է սովորեցնել,
 թէ ինչ պէտք է անել կատարեալ քրիստո-
 նեայ եւ կատարեալ մարդ լինելու համար էլն:
 Այսպիսի շարաշար վերաբերումն և յարգա-
 նաց պահասութիւն դէպի ս. Գիրքը կարող է
 լինել միայն մի ժողովրդի մէջ՝ որի համար
 զազարել է նա կեանքի ուղեցոյց լինելուց: —
 Մի տարի առաջ լոյս տեսաւ Արժ. Գր. քահ. Մ.
 Մանգակունու նման աշխատութիւնը Հին
 Կտակարանի վերաբերեալ՝ մի հաստ գիրք՝ որի
 հեղինակը շատ դէպքում կարողութիւն չու-
 նենալով մինչև իսկ հայերէն գրաբար պարզ
 նախագասութիւններն աշխարհաբարի վերա-
 ծելու՝ երբայեցերէն բնագրից է խօսում: հե-
 ուսից մօտիկից՝ հնախօսական պատմական
 լեզուագիտական և ըն ծանօթութիւններ է
 ժողովում և կամենում է ամբողջ Հին Կտա-
 կարանը մասամբ թարգմանօրէն մասամբ քա-
 ղուածօրէն: հասկանալի լեզուով հայ ընթեր-
 ցողների առաջը դնել:—Շատ զովելի է հար-
 կաւ մեր քահանաների մատենագրական ե-
 ուանդը բայց պէտք է չմոռանալ որ համե-
 տութիւնը ամէն մտքով զարդ լինելով՝ հո-
 դեորականի համար անհրաժեշտ պահանջ է
 մինչ ընդհակառակն հէնց այս ասպարիզի վե-
 րայ մանուսնդ վերջին տարիներս յաճախ
 մեծապէս մեղանչում են համեստութեան դէմ:
 Մենք հակառակ ասելիք չէինք ունենայ այլ
 հոգեով ու բախ կլինէինք եթէ մի քահանայ
 որին ս. Գիրքը երկար տարիներ հոգեոր անուշդ
 է մատակարարել թէկուզ նա իւր հայերէն
 աստուածաշնչից գուրս ոչինչ ծանաչէ յանձն
 է առնում աւետարանի այս կամ այն մտքը
 կամ նոյն իսկ ամբողջ աւետարաններ ու Հին և
 Նոր Կտակարան տաք սրտով և պարզ լեզուով
 պատմել տղատօրէն ու բացօտարել հասարակ
 ժողովրդին: Այդպիսի գրուածներ շատ հար-
 կաւ որ են և կարող են օգտակար ծառայու-
 թիւն մատուցանել: Եթէ նոքա շատ թերու-
 թիւններ իսկ ունենան բաւական է որ ջեր-